ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)
ՀԻՄՆԱԴՐԱՄ

REPUBLIC OF ARMENIA
A. I. ALIKHANYAN NATIONAL
SCIENCE LABORATORY
(YEREVAN PHYSICS INSTITUTE)
FOUNDATION

0036 Երևան, Ալիխանյան եղբայրների 2, հեռ.(37410) 341 500, ֆաքս(37410) 349 392 • 2 Br. Alikhanyan str., 0036 Yerevan, tel.(37410) 341 500, fax. (37410) 349 392

_28___06____2019___թ. N_01-14/05___

Hetq.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին,

Հարգելի պարոն Մուրադյան,

Ի պատասխան Ձեր գրության հայտնում եմ, որ “Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երեւանի ֆիզիկայի ինստիտուտ)” հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի որոշումները ձեւակերպված են առանձին որոշումների, արձանագրային որոշումների եւ էլեկտրոնային կարգով կայացված որոշումների տեսքով: Խորհրդի նիստերի արձանագրություններում, ինչպես նաեւ էլեկտրոնային կարգով կայացված որոշումներում, որոնք կազմում են հոգաբարձուների խորհրդի կողմից կայացված որոշումների մեծամասնությունը, ներառված են խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների քննարկումների սղագրությունները, որոնք պարունակում են հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ (անձնական տվյալներ, ծառայողական, առեւտրային գաղտնիք կազմող տեղեկություններ): Նման տեղեկությունների հրապարակումը Հիմնադրամի համար կառաջացնի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Ձեր պահանջած տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է ֆիլտրել ինը տարվա վաղեմության փաստաթղթերը, գնահատել դրանց մեջ ներառված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը, առանձնացնել այն հատվածները, որոնց տրամադրումը երրորդ անձանց արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ, կազմել համապատասխան քաղվածքներ եւ ներկայացնել Ձեզ:

Հաշվի առնելով, որ Հիմնադրամի աշխատակիցները խիստ ծանրաբեռնված են իրենց աշխատանքային ծրագրերում ներառված աշխատանքների կատարմամբ, Ձեր կողմից պահանջված տեղեկատվությունը 30-օրյա ժամկետում ֆիլտրելու համար անհրաժեշտ է Հիմնադրամի համապատասխան աշխատակիցներին ներգրավել արտաժամյա աշխատանքի, այդ թվում նաեւ հանգստյան օրերին, ինչը ենթադրում է համապատասխան վճարում:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

Հիմնադրամի կողմից կատարված հաշվարկների համաձայն 30-օրյա ժամկետում ինը տարվա վաղեմության փաստաթղթերի (մոտ 50 ծավալուն փաթեթ) ուսումնասիրության, ֆիլտրման եւ պահանջվող տեղեկատվության տրամադրման փաստացի ծախսերը կկազմեն 550,000 ՀՀ դրամ (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը եւ այլ վճարումները), որը ներառում է 1 ամսով ներգրավված աշխատակցի վարձատրություն, այդ թվում արտաժամյա՝ մոտ 40 ժամ՝ 250,000 ՀՀ դրամ, վերադաս աշխատակցի արտաժամյա վարձատրություն՝ 300,000 ՀՀ դրամ:

Պահանջվող տեղեկատվության շրջանակը հստակեցնելու դեպքում, եթե դրա տրամադրումը հնարավոր լինի կազմակերպել ավելի քիչ ռեսուրսներով, տեղեկատվության տրամադրման ծախսերը համապատասխանաբար կկրճատվեն:

Հարգանքով՝

“Ա. Ի. Ալիխանյանի անվան
ազգային գիտական լաբորատորիա
(Երեւանի ֆիզիկայի ինստիտուտ)”
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝ Ներսես Երիցյան